



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԵՒ

ԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 12.

1846

ՅՈՒՆԻՍԻ 15.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱԿԱՆ ԹԻՒՆ

Կատարող Դաստարակաւեան շնորհաւոր :

ԼԱՆԱՐԶՔԻՍ մէջ ինչպէս որ ուրիշ ամէն բաներուն աղէկն ու գէշը՝ նաեւ միջակ տեսակները կան, ասանկ ալ կրթութիւն տալուն, դաստիարակելուն, ուսմունք սորվեցնելուն, դրպարատուն բանալուն աղէկ ու գէշ տեսակները կ'ըլլան :

Որովհետեւ մարդս նիւթական է, այսինքն մարմին ունի, նաեւ մտաւոր է, այսինքն հոգի ունի ու մտածել գիտէ, բանաւոր և բարոյական ալ է, այսինքն աղէկը գէշէն ընտրող է. ուստի ծնողք թէ որ աս իրեքին մէջն ալ իրենց տղաքը կրթելու ջանան, տղաքը պակասաւոր կ'ըլլան, անկատար մարդ կը սեպուին : Այնպէս ալ մէկ դպրոցի մը մէջ աս իրեք կարողութիւններուն ալ հարկաւոր եղած ուսմունքները թէ որ չգտնուին, կատարեալ աղէկ դպրոց չէ անիկայ, և հոն տղոց ամէն կատարելութիւնները չկրթուելով՝ աւելի կը վնասուին : Ինոր համար մէկը ծնող եղածին պէս՝

պիտի միտքը հաստատուն դնէ՝ թէ աս իրեք կարողութիւնները մէկտեղ կրթելով կ'ըլլայ մարդս կատարեալ, և ասոնցմէ մէկը առանց կրթելու թողուլը՝ մարդուս մեծ վնասուն պատճառ է, և այն անկատար կրթութեամբ մարդը վերջը շատ մեծ ցաւ պիտի իմանայ : Օր օրինակ տղու մը թէ որ մարմնոյն մէկ անդամը պակաս ըլլայ, ինչպէս ըսենք՝ մէկ ձեռքը կամ մէկ ոտքը, ինչպէս կը ցաւին ծնողքը իրենց տղուն պակսութեանը վրայ. անանկ որ այնպիսի տղուն աւելի մեռնիլը կ'ուզեն, քան թէ ապրիլն ու նախատինք ըլլալը ամենուն առջև, և իր գործքերն ալ ընելու անկարող ըլլալը : Իսկից աւելի պէտք է ըլլայ ծնողաց ցաւը՝ երբոր իրենց տղան աս իրեք կատարելութիւններէն մէկուն մէջ պակասաւոր երևնայ :

Որովհետեւ նմանութեամբ սկսանք խօսիլ, նմանութեամբ ալ խօսքերնիս առաջ տանինք : Այն որ մէկ մարդ մը



